ՀԽՆ թիվ Ն-15Հ
Հավելված 1

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալը

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «Փյունիկի աստղ» մեդալով պարգևատրվում է քաղաքացիական հասարակության հետ ակտիվ համագործակցելու, Հիմնադրամի գործունեությանը օժանդակելու, հասարակական կարգի պահպանության, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության ժամանակ անձնական խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «Փյունիկի աստղ» մեդալով պարգևատրվում են Հիմնադրամի շահառուները և մեկենասները, Հիմնադրամի հետ համագործակցող պետական և ոչ պետական կառույցների և գերատեսչությունների աշխատակիցները և ղեկավարները, այդ թվում՝ Հայաստնի Հանրապետությունում ներքին գործերի, ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտներում քաղաքականություն մշակող գերատեսչությունների և պետական մարմինների , Ոստիկանության և Փրկարար ծառայության ծառայողները, աշխատակիցները և ղեկավարները ինչպես նաև Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի Նախագահի որոշմամբ այլ անձինք:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրելը և պարգևատրման միջնորդություն ներկայացնելը

1. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի(այսուհետ՝ Հիմնադրամ) «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով (այսուհետ՝ Մեդալ) պարգևատրում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի Նախագահը(այսուհետ՝ Նախագահ)՝ հրապարակելով հրամաններ:
2. Նախագահը պարգևատրում է մեդալով Հիմնադրամի Գործադիր տնօրենի կամ վարչության պետերի միջնորդությունների հիման վրա:
3. Մեդալով պարգևատրելու միջնորդությանը ներկայացվող պահանջները և միջնորդությունը ներկայացնելու կարգը, և պարգևատրելու կարգը հաստատում է Նախագահը:
4. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրման հարցը որոշվում է պարգևատրվող անձի մատուցած ծառայությունների բնույթին ու կարևորությանը համապատասխան: Անկախ միջնորդությունում նշված հիմնավորումներից պարգևատրման նպատակահարմարությունը որոշում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի Նախագահն:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրելու կարգը

5. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրում է «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) նախագահը(այսուհետ՝ Նախագահ)՝ Գործադիր տնօրենի կամ վարչության պետի համապատասխան միջնորդության հիման վրա:
6. Նախագահն «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրում է հրամանի ընդունմամբ:
7. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով (այուհետ՝ մեդալ)պարգևատրելու վերաբերյալ միջնորդությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Նախագահն կարող է մեդալով պարգևատրելու վերաբերյալ Նախագահի հրամանի նախագիծն իր առարկություններով վերադարձնել միջնորդություն ներկայացրած անձին:
8. Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված ժամկետում մեդալով պարգևատրելու վերաբերյալ Նախագահի հրամանի նախագիծն իր առարկություններով միջնորդություն

ներկայացրած անձին չվերադարձվելու դեպքում Նախագահն եռօրյա ժամկետում ստորագրում է «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով պարգևատրելու վերաբերյալ Նախագահի հրամանը:

9. Նախագահի համապատասխան հրամանի համաձայն Գործադիր տնօրենը ստորագրում է Մեդալի վկայականը:

10. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալով միևնույն անձին մեկից ավելի պարգևատրում չի կատարվում:

11. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալ շնորհվում է նաև հետմահու:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» մեդալի հանձնման կարգը, դրանց նկարագրությունների և նմուշների հաստատումը

12. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «Փյունիկի աստղ» մեդալը (այսուհետ՝ մեդալ) շնորհվում է պետական և հասարակական ակտիվ գործունեություն ծավալող անձնաց, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության, փրկարարական աշխատանքներում ցուցաբերած անձնական խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:

13. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «Փյունիկի աստղ» մեդալով պարգևատրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

14. «Ռազամվարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) «Փյունիկի աստղ» մեդալը հանձնում է Հիմնադրամի Գործադիր տնօրենը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից լիազորած անձը:

Պարգևատրված անձին մեդալի հետ հանձնվում են նաև համապատասխան վկայական և հրաման:

15. «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «Փյունիկի աստղ»» մեդալը պատրաստված է բրոնզափառ պղնձից, բաղկացած է 2 տարրից՝ կարմիր, կապույտ, նարնջագույն ուղղանկյունաձև զոլակից և դրան կապօղակով ամրացված ութակողմ բազմանկյունից: Պատկերում առանձնաում է երկու ուրվագիծ՝ քառակուսի և խաչ:

Զոլակն ունի 26 մմ երկարություն և 17 մմ լայնություն, պատված է եռագույն սառը արծնով: Ութանկյան տրամագիծը 45 մմ է, կենտրոնում առկա է 25 մմ տրամագծով մետղյա ներդիր, որի վրա պատկերված է Հիմնադրամի լոգոն՝ կարմիր գույնի փյունիկ թռչունը, նարնջագույն և կապույտ կիսաշրջաններով:

Ութանկյունն ունի ուռուցիկ եզրաշերտ: Մեդալը պատրաստված է թեթև մետաղից, լոգոյի վերևի մասում կա մակագրություն՝«ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ», իսկ ներքևի հատվածում լատնինատառ մակագրություն՝ «PHOENIX STAR»:

Սկավառակը պատրաստված է թեթև մետաղից և արտադրված է դրոշմման եղանակով:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է, և առկա է մակագրություն՝ NCS Armenia Phoenix star:

ՀԽՆ թիվ Ն-15Հ
Հավելված 2

«ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ» ՄԵԴԱԼԻ ԵՎ ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՄՈՒՇԸ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Հոգաբարձուների խորհրդի Նախագահի
«_____» «_____» 20____ թվականի թիվ ____-Մ հրամանով

_____

պարգեվատրվել է «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի «**ՓՅՈՒՆԻԿԻ ԱՍՏՂ**»» մեդալով:

Գործադիր տնօրեն՝ _____ Մ. Ավետիսյան